



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 մարտի 2020թ. թիվ 324-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ «ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ  
ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ» ԴԵՊԲԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՎԱՐԱԿԻ  
ՏԱՐԱԾՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՇՏԱԲ»  
ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կետերով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «ե», «զ» և «է» կետերով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետի 15.03.2020թ. թիվ 17/280 գրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր հիվանդության «Հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող» դեպքի արձագանքմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի անդամներից ձևավորել կորոնավիրուսի վարակի տարածման, կանխարգելման և արձագանքման մարզային շտաբ (այսուհետ՝ շտաբ):

2. Հաստատել շտաբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Շտաբին՝

1) առաջնորդվել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզային շտաբի գործողությունների և իրականացվելիք միջոցառումների» պլան-ժամանակացույցով՝ համաձայն հավելված 2-ի,

2) իրականացնել ստեղծված իրավիճակի վերլուծության, համարժեք արձագանքման և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում հնարավոր համաճարակ առաջացնող գործոնների կանխման ու հետևանքների վերացման աշխատանքներ,

3) ըստ անհրաժեշտության գործողության մեջ դնել «Արտակարգ իրավիճակներում Լոռու մարզի բնակչության պաշտպանության պլան»-ի 13-րդ հավելվածը՝ «Համաճարակների դեպքում ՀՀ Լոռու մարզի գործելու պլան»-ը և կիրառել սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետը,

4) ճշգրտել «Արտակարգ իրավիճակներում Լոռու մարզի բնակչության պաշտպանության պլան»-ի 13-րդ հավելվածը՝ «Համաճարակների դեպքում ՀՀ Լոռու մարզի գործելու պլան»-ը,

5) ապահովել Հայաստանի Հանարպետության Լոռու մարզպետի 2017 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀ Լոռու մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 9-ի «Լոռու մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» թիվ 159-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 464-Ա որոշման պահանջները,

6) նախապատրաստել հայտեր՝ արձագանքող ուժերի, վարակազերծող խմբերի համար անհատական պաշտպանության միջոցների և վարակազերծման միջոցների ձեռք բերման համար:

4. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ստեղծել կորոնավիրուսի տարածման, կանխարգելման և արձագանքման խմբեր՝ համայնքի ամբուլատոր ծառայության ներգրավմամբ,

2) ցուցաբերել աջակցություն սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված պլանով սահմանված միջոցառումների իրականացմանը:

5. Մարզային շտաբին և համայնքային խմբերին՝

1) իրականացնել բնակչության շրջանում լայնածավալ բացատրական և իրազեկման աշխատանքներ՝ տեղական ԶԼՄ-երի, սոցիալական ցանցերի և թերթիկների միջոցով:

6. Մարզային շտաբի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու իրավասությունը վերապահել մարզային շտաբի պետին, կամ վերջինիս հանձնարարությամբ շտաբի այլ անդամի:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մարզային շտաբի անդամների իրազեկման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature

X 

ԱՆԴՆԵՅ ԴՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ԴՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. մարտի 16  
ք.Վանաձոր

ԿԱԶՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՇՏԱԲԻ

- Ա.Ղուկասյան - շտաբի պետ, ՀՀ Լոռու մարզպետ  
Գ.Մարկոսյան - շտաբի պետի տեղակալ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ  
Ս.Գաբրիելյան - շտաբի պետի տեղակալ, Լոռու մարզային փրկարարական վարչության պետ  
Շտաբի անդամներ.  
Ա.Մխիթարյան - մարզպետարանի գլխավոր քարտուղար  
Լ.Վարդանյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող  
Ա.Ջանազյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ  
Հ.Պապոյան - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ  
Ռ.Հարությունյան - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար  
Ա.Սահակյան - մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ  
Վ.Հովհաննիսյան - մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ՀԳՄՍՍ գործունեության համակարգման բաժնի պետ  
Կ.Ալչանգյան - Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության Լոռու մարզային վարչության պետ  
Տ.Կարապետյան - Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ  
Ա.Սարգսյան - Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության թիվ 3 բանակային կորպուսի շտաբի պետ  
Կ.Սողոյան - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Լոռու մարզային կենտրոնի պետ  
Ա.Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի տնօրեն  
Ս.Լամբարյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական պետական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի պետ  
Ա.Բաղդասարյան - «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի «Լոռի» տեղամասի պետ

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

 Invalid signature



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՇՏԱԲԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառում	Ժամ	Գործողություններ
1	2	3	4
<b>Կենսաբանական բնույթի արտակարգ իրավիճակների դեպքում</b>			
1.	Դեպքի մասին տեղեկատվության հայտնում	Ժ+20ր	Դեպքի մասի տեղեկատվության տրամադրում՝ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզային օպերատիվ շտաբ, - Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն (9-11, 0322- 2 -35 -31, 091-32-31-12) - շահագրգիռ մարզային այլ մարմիններին:
2.	Ուժերի պատրաստականության բերում	Ժ+ 1ժ 30ր	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզային շտաբի անդամների կողմից իրենց կազմակերպությունների (մարմինների) անձնակազմի ազդարարում, հավաք:
3.	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ճառագայթային, քիմիական ու մարէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի (ՃՔՄԻՄՀ) հիմնարկների պատրաստականության բերում	Ժ+ 1ժ 30ր	Մարզի ՃՔՄԻՄՀ հիմնարկների՝ - ազդարարում, - տեղեկատվության փոխանակում, - ՃՔՄԻՄՀ-ում ընդգրկված խմբերի կենսաբանական հետախուզության սարքերի և անհատական պաշտպանության միջոցների աշխատանքային վիճակի բերում
4.	ՃՔՄԻՄՀ-ում ընդգրկված արձագանքող խմբերի հավաք	Ժ+ 2ժ	Անձնակազմի խնդրադրում, մեկնում դեպքի վայր
5.	Մարզի տարածքի կենսաբանական իրավիճակի մոնիթորինգ		Կենսաբանական իրավիճակի մոնիթորինգի տվյալների ստացում և փոխանցում շահագրգիռ մարմիններին:
6.	Տեղանքի հատուկ մշակում		Մասնակցություն տեղանքի հատուկ մշակման լիակատարության որոշմանը:

7.	ՃՔՄԻՄՀ-ում ընդգրկված խմբերի անձնակազմի սանիտարական մշակում և սարքերի վարակազերծում		Մասնակցություն ՃՔՄԻՄՀ-ում ընդգրկված խմբերի անձնակազմի սանիտարական մշակմանը և սարքերի վարակազերծում:
8.	ՃՔՄԻՄՀ-ում ընդգրկված խմբերի վերադարձ մշտական տեղակայման վայր		<ul style="list-style-type: none"> <li>- Ձեկույց կատարած աշխատանքների վերաբերյալ,</li> <li>- Առաջարկների ներկայացում կենսաբանական բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ուղղությամբ:</li> </ul>

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

03/16/20

  
 ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ